**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գայ համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ.
Գայ, Հեռ. (0231)60136 , gay.armavir@mta.gov.am

N 136
*10 հուլիս 2018թ.*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԳԱԳԻԿ ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Միրիջանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2018 թվականի հունիս ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. Մարկոսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

08 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 29

## ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով,<<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Արամայիս Մանուկյանի 2018 թվականի հունիսի 6+-ի դիմումը.

Որոշում եմ.

1,Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Խաղաղության 4 փողոց տուն 6 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Արամայիս Հրաչի Մանուկյանի 'ծնված 20,04,1949թ.,գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,14 հա հողամասի և հողամասին կից ավել օգտագործվող 0,0158հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ բնակելի տուն 89,5քմ կառուցված1970թ, բնակելի տուն՝18,3քմ կառուցված 1971թ.ծածկած մուտք՝17,5 քմ, կառուցված1970թ., պահեստ՝4,6քմ կառուցված 1970 թ., ծածկ՝22,7 քմ կառուցված 1970թ,լոգարան՝3,3քմ, կառուցված 1970թ.,թոնրատուն՝14,3քմ կառուցված 1971թ.մառան՝24,9քմ կառուցված1971թ.,անասնաշենք՝8,4 քմ կառուցված 1971թ.:

Բնակելի տունը բավարարում է <<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները:Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում:Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2,Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3,Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը՝գրանցելու Արամայիս Հրաչի Մանուկյանի /ծնվ. 20,04,1949թ./սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4,Բնակելի տանը տրամադրել Խաղաղության 4 փողոց, տուն 6 հասցեն:

5,Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 30

## ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,<<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի առաջին ենթակետի պահանջներին և հաշվի առնելով քաղաքացի Կարինե Հարությունյանի 2018 թվականի հունիսի 11-ի դիմումը .

Որոշում եմ.

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Երևանյան 9 փողոց թիվ 4 հասցեում գտնվող Կարինե Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող0.12 հա օրինական տնամերձ հողամասի և կից ավել զբաղեցրած 0.00705 հա հողամասի նկատմամբ գույքային իրավունքները:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանումում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ու Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 31

## ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով ,<<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Անահիտ Գալստյանի 2018 թվականի հունիսի18-ի դիմումը.

Որոշում եմ

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Իսահակյան 2 փողոց տուն 15 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Անահիտ Սերյոժայի Գալստյանի `ծնվ. 23.01.1952թ., Արթուր Օթարի Գալստյանի `ծնվ. 23.06.1974թ.և Սերյոժա Օթարի Գալստյանի՝ծնվ.21.08.1979թ.,գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0.08 հա հողամասի և հողամասին կից ավել օգտագործործվող 0.010713 հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և օժանդակ շինության նկատմամբ՝բնակելի տուն՝135.20քմ կառուցված1976թ.,ջրավազան՝3.40քմ,կառուցված 2002թ.:

Բնակելի տունը բավարարում է <<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:2.Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը՝ գրանցելու Անահիտ Գայստյանի՝ծնվ.23.01.1952թ., Արթուր Գալստյանի `ծնվ. 23.06.1974թ., Սերյոժա Գալստյանի՝ ծնվ.21.08.1979թ.սեփականության իրավունքը սույն որոշման առաջին կետում նշված

հողամասի , հողամասում առկա բնակելի տան , օժանդակ շինության նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:4.Բնակելի տանը տրամադրել Իսահակյան 2 փողոց տուն 15 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 32

## ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով ,<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով , Գայ համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով.

Որոշում եմ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտի տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացնել հսկողություն , որի իրականացումը վերապահել Գայի համայնքապետարանի աշխատակիցներին ՝ համաձայն հավելվածի:

2.Հսկողություն իրականացնող աշխատակիցներին՝սույն որոշմամբ նախատեսված հսկողությունն իրականացնել 1 աշխատանքային օրվա ընթացքում և այդ մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 33

### ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2018 թվականի հունիսի 19-ի թիվ 01.1/02.1/2186-18 գրությունը և 2018 թվականի հունիսի 26-ի թիվ .1/07.1/2349-18 գրությունը.

Որոշում եմ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքում ներքին և արտաքին ազդարարման համար պատասխանատու անձ նշանակել Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին

2.Պաշտոնական կայքում հրապարակել պատասխանատուի տվյալները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն**
27 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 11

# ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1599-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Անահիտ Սարգսյանի 2018 թվականի հունիսի 27-ի դիմումը.

Կարգադրում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի <<Արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Սարգսյանին տրամադրել 2018 թվականի ամենամյա արձակուրդը՝ սույն թվականի հուլիսի 2-ից մինչև օգոստոսի 6-ը ներառյալ `30 աշխատանքային օր տևողությամբ

2.Անահիտ Սարգսյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի օգոստոսի 7-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ**